«ՔԱՌԱՆԻՇ ՀԱՄԱՐ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՑՈՒՑԱԿԸ

1. Սույն պայմանների կիրառության մեջ մտնելու պահից հաստատել «Քառանիշ համար» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պայմանները։
   «Քառանիշ համար» Ծառայությունը «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից տրամադրվող ֆիքսված հեռախոսակապի ծառայություն է՝ նախատեսված միայն մուտքային զանգերի համար՝ համաձայն ստորև ներկայացված Աղյուսակ 1-ի՝
   Աղյուսակ 1. «Քառանիշ համար» ծառայության գնացուցակ՝

Միանվագ վճարումներ	**դրամ**
Հեռախոսագծի ակտիվացում*	9000
Ամսական վճարումներ	**դրամ**
Ամսական բաժանորդավճար յուրաքանչյուր քառանիշ հեռախոսահամարի համար	7200

Գները ներկայացված են ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ։

*Հեռախոսագծի ակտիվացման վճարը գանձվում է միանվագ, յուրաքանչյուր քառանիշ հեռախոսահամարի համար, հետվճարային կարգով, Ծառայությունների ակտիվացման ամսվա ընթացքում մատուցված Ծառայությունների դիմաց ներկայացվող հաշվի շրջանակում։

2. Սույն պայմաններով սահմանված պայմանները գործում են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ «MPLS» տեխնոլոգիայով բաժանորդագրված իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների համար։
3. Սույն պայմաններով սահմանված «Քառանիշ համար» Ծառայության համարներին կատարված զանգերի համար գանձումը կատարվում է զանգ կատարող անձից՝ որպես ՀՀ ֆիքսված համարին կատարված զանգ՝ համապատասխան վերջինիս գործող սակագնային պլանի։
4. «Քառանիշ համար» Ծառայության շրջանակում տրամադրված հեռախոսահամարից հնարավոր չէ իրականացնել ելքային զանգեր։
5. «Քառանիշ համար» Ծառայության շրջանակում տրամադրված հեռախոսահամարի ուղղությամբ հնարավոր չէ մուտքային զանգեր ստանալ միջազգային ուղղություններից։
6. «Քառանիշ համար» ծառայության համարներն ունեն հետևյալ ձևաչափը՝ 8xxx :